ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐԻՆ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻՆ* ՈՐ ՅԵՐԵՒԱՆ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Ձեր ծննդեան վաստակաբեռն ութսունամեակի սա օրերուն սիրով կ՚արձանագրենք, որ տարիներ շարունակ Դուք հայրենիքը ներկայացրեցիք Սփիւռքում եւ Սփիւռքը՝ Հայրենիքում, գծագրելով աշխարհասփիւռ մեր ժողովրդի հոգու եւ քարտեզի գոյներու խճանկարը:

Հայաստանեան ընթերցողներու սրտերուն մէջ Դուք վառ պահեցիք կարօտն ու յիշատակը մեր կորսուած հայրենիքին, իսկ անոր սփիւռքուած բեկորներուն խանդավառեցիք հայրենի կեանքին այլազան բնագաւառներուն մէջ տարեցտարի արձանագրուող նոր յաջողութիւններով:

Ձեր «Խօսք իմ որդուն» սքանչելի բանաստեղծութիւնը որպէս մշտատեւ մի պատգամ, շարունակ կը հնչէ «օտար եւ ամայի» ճամբաներուն վրայ քալող սփիւռքեան քարաւաններուն համար:

Ի գնահատութիւն Ձեր գրական ու հասարակական բոլորանուէր ծառայութիւններուն եւ հայոց մշակոյթին ու դպրութեանը բերած մեծ նպաստին, այսու Հայրապետական Կոնդակս, յանուն մեր ազգի քրիստոնէական ծննդավայրին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Ձեզի կը շնորհենք

Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ շքանշանը:

Ի խորոց սրտի կ՚աղօթենք առ Ամենաբարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգեւէ ստեղծագործական արգասաբեր աշխատանքի երկար տարիներ, քաջառողջութիւն եւ երջանկութիւն անձնական կեանքում, ի ծառայութիւն հայոց «փոքր ածու»ի «քանական անդաստանին»:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մենջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15 Ապրիլի
Յամի Տեառն 1999 եւ ի Թուին Հայոց ՌՆԽԸ
ի Մայրաքաղաքս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/229